ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/64

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Քոյլոյանի (լիազորագիր՝ տրված 09.08.2021թ.),

քննելով Օձունի համայնքապետարանի կարիքների համար Օձուն համայնքի բնակավայրերում լուսավորության համակարգերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԼՄՕՀ-ԳՀԱՇՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից 10.08.2021թ. ներկայացված (10.08.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/64 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1.<u>«Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 10.08.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

1.1. «Օձունի համայնքապետարանը (այսուհետ նաև Պատվիրատու) իր կարիքների համար «Օձուն համայնքի բնակավայրերում լուսավորության համակարգերի կառուցման»

աշխատանքների կատարման նպատակով 16.07.2021 թվականին հրապարակել է թիվ «ԼՄՕՀ-ԳՀԱՇՁԲ-21/10» գնանշման հարցումը (այսուհետ նաև Գնման ընթացակարգ):

1.2. Գնման ընթացակարգի շրջանակում մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊ ընկերությունը (այսուհետ նաև Մասնակից):

1.3. Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 03.08.2021 թվականի թիվ 2 արձանագրությամբ «ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, այն պատճառաբանությամբ, թե՞ իբր Մասնակցի կողմից հայտը ներկայացվել է հրավերի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ բաժիններով սահմանված կարգի խախտմամբ:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով.

Նշված իրավական նորմերի վերլուծությունից պետք է փաստել հետևյալը, որ գնման ընթացակարգի շրջանակում մասնակից հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, եթե այն չի համապատասխանում հրավերի պայմաններին, հակառակ դեպքում այն ենթակա է գնահատման որպես բավարար: Հրավերի պայմաններ ասելով օրենսդիրը հստակ տվել է սահմանում, այն մասին, որ հրավերը պայմանագիր կնքելու նպատակով մասնակցին առաջարկվող պայմաններն են, այսինքն այն բոլոր տեղեկությունները, որոնք հանիդսանում են պայմանագրի էական պայմաններ: Ընդ որում օրենսդիրը նույնիսկ նախատեսել է գնային առաջարկում տեղ գտած որոշակի ձևական սխալների դեպքում հայտը չմերժելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի պարտականություն և բոլոր այդ դեպքերում սահմանված են այնպիսի իրավիճակներ, որ գնային առաջարկը չի կարող մերժվել ձևական սխալների պարագայում, եթե հնարավոր է դրա նույնկանացումը, այսինքն սահմանելով լայն մրցակցության հնարավորություն, բացառել է ձևական

նկատառումներով միջամտությունը: Եթե օրենսդիրը նախատեսել է հրավերի պայմանների վերաբերյալ ձևական սխալների պարագայում հայտը մերժելու անհնարինություն, ապա նախ և առաջ պարզաբանման է ենթակա այն հարցադրում թե՞ գնման ընթացակարգի շրջանակում Մասնակցի կողմից ներկայացված հայտը, գնային առաջարկը ինչպիսի խախտումներ է պարունակում, կամ ոչ, որից հետո նոր միայն հնարավո կլինի փաստել օրենքի ուժով հայտ մերժելու կամ բացառություններով պայմանավորված այն բավարար գնահատելու հնարավորությունը:

Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից: Ուստի յուրաքանչյուր դեպքում բացահայտելով և մեկնաբանելով օրենսդրի կամքը պետք է փաստել, որ գնային առաջարկում առկա սխալների հիմքով Մասնակցի կողմից հայտը մերժելու օրենսդրական հնարավորություն Պատվիրատուն կամ գնահատող հանձնաժողովը իրավասու է միայն այն դեպքերում, երբ առկա չեն սահմանված սահմանափակումներ:

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտի գնահատման արդյունքներն արտացոլվում են հայտերի բացման և հնահատման նիստի արձանագրային որոշման պատճառաբանական մասում, որտեղ Հանձնաժողովը պետք է մատնացույց անի այն փաստական հանգամանքները, որոնց վրա կառուցում է իր եզրահանգումներն ու հետևությունները, ինչպես նաև այն դատողությունները, որոնցով հիմնավորում է իր դիրքորոշումը: Հանձնաժողովի որոշումը միայն այն դեպքում կարող է համարվել պատշաճորեն պատճառաբանված, երբ հանձնաժողովը հստակորեն արձանագրել և փաստել է հայտի գնահատման հարցում իր ներքին համոզմունքի ձևավորման հիմքերը, որը կարող է իրավական նշանակություն ստանալ արձանագրային որոշմանը ներկայացվող՝ հիմնավորվածության և պատճառաբանվածության օրենսդրական պահանջի միջոցով:

Ամփոփելով նշեմ, որ հանձնաժողովը պատճառաբանված որոշում կայացնելու նպատակով պետք է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատի գործում եղած բոլոր փաստական տվյալները՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Հանձնաժողովի կողմից գործի բոլոր փաստական հիմքերի գնահատման արդյունքներն արտացոլում է ընդունված արձանագրությունում, որտեղ պետք է մատնացույց անի այն փաստերը, որոնց վրա կառուցում է իր եզրահանգումներն ու հետևությունները, ինչպես նաև այն դատողությունները, որոնցով հերքվում է այս կամ այն հանգամանքը: Որոշումը կարող է համարվել պատշաճ կերպով պատճառաբանված միայն այն դեպքում, երբ Հանձնաժողը իր կողմից ընդունված արձանագրության մեջ ցույց է տվել փաստերի գնահատման հարցում իր ներքին համոզմունքի ձևավորման օբյեկտիվ հիմքերը:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ, պետք է արձանագրել հետևյալը, որ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Մասնակցի հայտը կարող էր անբավարար գնահատել և մերժել միայն այն դեպքում, երբ արձանագրությամբ կմատնանշեր բոլոր այն փաստական հիմքերը, որոնք հնարավորություն են նձեռնել նրան ձևավորելու այնպիսի ներքին համոզմունք, գնային առաջարկը կազմված է օրենսդրական պահանջների խախտմամբ, արձանագրելով նաև բացառությունների կիրառման հնարավորությունը, և հստակ սահմանելով հանգամանքերը, որոնց արդյունքում գնային առաջարկը համարվում է ներկայացված օրենսդրական պահանջների խախտմամբ: Քանզի հանձնաժողովը իր 03.08.2021 թվականի թիվ 2 արձանագրային որոշմամբ չի մատնանշել այն հանգամքները, թե՞ որոնք են հիմք հանդիսացել Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը սահմանված կարգի խախտմամբ ներկայացված լինելու հանգամանքը փաստելու համար, ավելին չի նշել այն իրավական հիմքը, թե՞ սահմանված որ օրենսդրական կարգի խախտմամբ է կազմվել գնային առաջարկը, այլ միայն վերացական նշել է, որ գնային առաջարկը չի կազմվել հրավերի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ բաժիններին համապատասխան, հստակ չնշելով այն իրավական ակտը, որի պահանջները գնային առաջարկի կազմմամբ խախտել է Մասնակիցը: Գնահատող հանձնաժողի կողմից որոշման ընդունման համար փաստական և իրավական հիմքերը չմատնանշելը հանգեցրել է սխալ ներքին համոզմունքի, որի արդյունքում ընդունել է չպատճառաբանված և չհիմնավորված արձանագրային որոշում, ոչ իրավաչափ եղանակով մերժելով Մասնակցի հայտը:

Ուստի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողի կողմից Մասնակցի հայտը մերժելու արձանագրային որոշումը պատճառաբանված չէ և անհիմն է, ուստի այն հանդիսանում է ոչ իրավաչափ»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է ոչ իրավաչափ ճանաչել թիվ «ԼՄՕՀ-ԳՀԱՇՁԲ-21/10» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ 03.08.2021 թվականի թիվ 2 արձանագրային որոշումը:

Ի լրումն վերը շարադրված բողոքի Ընկերությունը 16.08.2021թ. հայտնել է հետևյալը.

«Թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/64 բողոքարկման ընթացակարգի շրջանակում 13.08.2021 թվականին հրավիրված նիստի ընթացքում կատարված հարցադրումների և ներկայացված բողոքի վերաբերյալ դիրքորոշումն ամփոփելու և պատշաճ քննություն իրականացնելու նպատակով անհարժեշտ էր նաև Պատվիրատուի դիրքորոշումը: Իհարկե գիտակցելով, որ Պատվիրատուին դիրքորոշում ներկայացնելու պարտադրման օրենսդրական մեխանիզմներ առկա չեն, պետք է փաստել, որ դրա բացակայությունը փաստում է Բողոքաբերի նշած փաստերը Պատվիրատուի կողմից ընդունելու հանգամանքը, զուգահեռներ տանելով իրավունքի մյուս ճյուղերի հետ և կիրառելով օրենքի անալոգիայի սկզբունքները:

Սույն ընթացակարգի շրջանակում բողոքը ներկայացվել է այն փաստական և իրավական հիմքով, որ հանձնաժողովը իր 03.08.2021 թվականի թիվ 2 արձանագրային որոշմամբ չի մատնանշել այն հանգամանքները, թե՞ որոնք են հիմք հանդիսացել Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը սահմանված կարգի խախտմամբ ներկայացված լինելու հանգամանքը փաստելու համար, ավելին չի նշել այն իրավական հիմքը, թե՞ սահմանված որ օրենսդրական կարգի խախտմամբ է կազմվել գնային առաջարկը, այլ միայն վերացական նշել է, որ գնային առաջարկը չի կազմվել հրավերի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ բաժիններին համապատասխան, հստակ չնշելով այն իրավական ակտը, որի պահանջները գնային առաջարկի կազմմամբ խախտել է Մասնակիցը:

Սույն ընթացակարգի շրջանակում կատարված հարցադրումների արդյունքում հղում կատարվեց այն հանգամանքին, որ վիճարկված արձանագրային որոշման մեջ, նշվել է այն փաստական հանգամանքները, որոնք հիմք են տվել գնահատող հանձնաժողովին ընդունելու վիճարկվող որոշումը: Հենց նշվածից խուսափելու և բողոքներ քննող անձի ներքին համոզմունքը օբյեկտիվ ձևավորելու համար կողմերը պետք է պատշաճ իրացնեն

իրենց պարտավորությունները: Նշվածի մատնանշման նպատակը կայանում է հենց այն հանգամանքում, որ գնահատող հանձնաժողովը, որպես փաստական հիմք մատնանշել է այն փաստական հանգամանքը, որ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես չի համապատասխանում հրավերով սահմանված մեկ չափաբաժնի անվանումը, մեկ ընդհանուր գնի փոխարեն ներկայացված է չորս առանձին գներ և չորս անվանումներ՝ ըստ առանձին բնակավայրերում նախատեսվող աշխատանքների:

Սույն ընթացակարգի շրջանակում բողոքը ներկայացման իրավական հիմքին անդրադառնալով պետք է կարևորել երկու հանգամանք և պարզաբանել երկու հարցադրում՝

1. Արդյո՞ք թիվ «ԼՄՕՀ-ԳՀԱՇՁԲ-21/10» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ «ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊ ընկերության հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ 03.08.2021 թվականի թիվ 2 արձանագրային որոշմամբ սահմանվել է, թե՞ սահմանված որ օրենսդրական կարգի խախտմամբ է կազմվել գնային առաջարկը.

2. Արդյո՞ք թիվ «ԼՄՕՀ-ԳՀԱՇՁԲ-21/10» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ «ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊ ընկերության հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ 03.08.2021 թվականի թիվ 2 արձանագրային որոշմամբ սահմանվել է այն փաստական հիմքերը, որոնք հնարավորություն են տվել կայացնելու Մասնակցի հայտը անբավարար գնահատելու որոշում.

Անդրադառնալով պարզաբանման ենթակա 1-ին հարցադրմանը պետք է հայտնեմ հետևյալը, որ թիվ «ԼՄՕՀ-ԳՀԱՇՁԲ-21/10» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ «ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊ ընկերության հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ 03.08.2021 թվականի թիվ 2 արձանագրային որոշմամբ չի սահմանվել այն օրենսդրական կարգը, որի ենթադրյալ խախտմամբ ներկայացվել է գնային առաջարկը միայն վերացկան հղում կատարելով է հրավերի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ բաժիններով սահմանված կարգին:

Ինչ վերաբերվում է պարզաբանման ենթակա 2-րդ հարցադրմանը, ապա հայտնեմ, որ նշված այն հանգամանքը, որ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես չի համապատասխանում հրավերով սահմանված

մեկ չափաբաժնի անվանումը, մեկ ընդհանուր գնի փոխարեն ներկայացված է չորս առանձին գներ և չորս անվանումներ՝ ըստ առանձին բնակավայրերում նախատեսվող աշխատանքների դեռևս չի կարող վկայել այն մասին, որ փաստերը հստակ մատնանշված են: Մասնավորապես գնահատող հանձնաժողովը պետք է հստակ հղում կատարեր հրավերի այն պահանջին, որով նախատեսված է գնային առաջարկի ներկայացման համար սահմանված լրացման կարգը, այդ հանգամանքը համադրության մեջ դներ Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի հետ և այդ երկու փաստերի համապարփակ վերլուծության արդյունքում փաստեր այս կան այն հանգամանքի առկայությունը կամ բացակայությունը. Ընդ որում ***Պատվիրատուն հրավերով հրապարակել է նաև թվով 4 ծավալաթերթեր՝ ըստ առանձին բնակավայրերում նախատեսվող աշխատանքների***, սույնի պարագայում պետք է արձանագրել, որ Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը առավել քան համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես հենց Պատվիրատուի կողմից հրապարակված թվով 4 ծավալաթերթերին. Եվ բողոքում ներկայացված այն դիրքորոշումը, որ արձանագրային որոշման համար հիմք ծառայած փաստական և իրավական հիմքերի չմատնանշելը հանգեցրել է սխալ հետևության, հենց այս հանգամանքները հաշվի առնելով էր նշվել, պարզապես Պատվիրատուի դիրքորոշմանը սպասելով պայմանավորված առկա էր հստակության անհրաժեշտություն: Եվ իվերջո պետք է արձանագրենք, որ գնային առաջարկը ներկայացվել է հրավերի պահանջներին՝ թվով 4 ծավալաթերթերին համապատասխան, իսկ վիճարկվող արձանագրային որոշմամբ մատնանշված այն հանգամանքը, որ մեկ չափաբաժնի անվանումը, մեկ ընդհանուր գնի փոխարեն ներկայացված է չորս առանձին գներ և չորս անվանումներ՝ ըստ առանձին բնակավայրերում նախատեսվող աշխատանքների չի կարող համարվել պատշաճ հիմնավորում, քանզի առկա չէ այն իրավական նորմը, որով պայմանավորված մերժվել է Մասնակցի հայտը: Որոշումների պատճառաբանված լինելու վերաբերյալ պահանջը ինքնանպատակ չէ, պարտադիր վավերապայման է, որի բացակայության պարագայում այդ որոշումը կդառան ոչ իրավաչափ, քանզի իրավական հիմքի մատնանշումը կարող է կանխորոշել հասցեատիրոջ վարքագիծը: Սույն դեպքում, եթե վիճարկվող արձանագրային որոշման մեջ բոլոր փաստական հանգամանքները նշված լինեին և նշված լիներ նաև իրավական հիմքը, այսինքն որ օրենսդրական կարգին անհամապատասխան է ներկայացվել գնային առաջարկը, ապա բողոքաբերը այդ մասով նույնպես կկարողանար

հստակ դիրքորոշում հայտնել և վիճարկել, հակառակ դեպքում գործ ունենք իրավունքների սահմանափակման հետ: Քանզի կիրառելի ենթադրվող նորմերը իրենց մեջ պարունակում են նաև բացառություններ և օրինակ Գնման ընթացակարգի հրավերի 2-րդ մասով հաստատված գնանշման հարցման հայտը պատրաստելու հրահանգի 1.2. կետի համաձայն՝ նպատակահարմարության դեպքում մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները: Նշված հանգամանքների համադրման և հարվերի 2-րդ մասով հաստատված գնանշման հարցման հայտը պատրաստելու հրահանգի 1.2. կետի, ինչպես նաև թվով 4 ծավալաթերթերի համաձայն կազմվել է գնային առաջարկը և այս պարագայում անհասկանալի է գնահատող ահնձնաժողովի վարքագիծը, իսկ շարունակությունը հենց պայմանավորված է նշված հանգամանքով՝ վիճարկվող արձանագրային որոշման մեջ փաստական հանգամանքների ոչ ամբողջական և ենթադրյալ խախտված իրավական նորմի չմատնանշելը պայմանավորված է հենց նշված հանգմանքով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն ընթացակարգի շրջանակում 13.08.2021 թվականին հրավիրված նիստին Պատվիրատուն չի ապահովվել մասնակցություն և չի ներկայացրել դիրքորոշում, բացի այդ քննարկման առաջադրված հարցադրումներով պայմանավորված անհրաժեշտություն է ծագել ներկայացնելու սույն լրացումը, ուստի միջնորդում եմ թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/64 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում հրավիրել ևս մեկ նիստ, ուսումնասիրության առարկա դարձնելով Պատվիրատուի կողմից հրապարակված հրավերը»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է ոչ իրավաչափ ճանաչել թիվ «ԼՄՕՀ-ԳՀԱՇՁԲ-21/10» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊ ընկերության հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ 03.08.2021 թվականի թիվ 2 արձանագրային որոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 13.08.2021թ. ժամը 11:05-ին և 18.08.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված բողոքը:

2. <u>Օձունի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Օձունի համայնքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 12.08.2021թ. թիվ 743-21 գրությամբ ներկայացրել է ԳԲՔԱ-ՆԳ-2021/64 բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 13.08.2021թ. ժամը 11:05-ին և 18.08.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/64 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2021/64 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Օձունի համայնքապետարանի կարիքների համար Օձուն համայնքի բնակավայրերում լուսավորության համակարգերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԼՄՕՀ-ԳՀԱՇՁԲ-21/10» գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):
2. Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում Օձունի համայնքապետարանի կարիքների համար՝ Օձուն համայնքի բնակավայրում լուսավորության համակարգերի կառուցման աշխատանքների ձեռքբերումը, որոնք խմբավորված են մեկ չափաբաժնում:
3. Հրավերին կից պայմանագրի նախագծի թիվ 1 Հավելվածով նախատեսվել է, որ աշխատանքների կատարման համար կցվում են առանձին ֆայլերով նախահաշիվներ, լուսատեխնիկական հաշվարկ և մասնագիր:
4. Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ն:
5. «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 2-ը՝ գնային առաջարկը ներկայացվել է հետևյալ տեսքով.

Չափաբաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի 1-ին /մասնակի/ և 22-րդ փողոցների գիշերային լուսավորության կառուցման աշխատանքներ	Երկու միլիոն յոթանասունմեկ հազար վեց հարյուր տասնմեկ 2,071,611	Չորս հարյուր տասնչորս հազար երեք հարյուր քսաներկու 414,322	Երկու միլիոն չորս հարյուր ութանասունհինգ հազար ինը հարյուր երեսունչորս 2,485,934
1	ՀՀ Լոռու մարզի Ծաթեր համայնքի 5-րդ,4-րդ և 12-րդ/մասնակի/ փողոցների գիշերային լուսավորության կառուցման աշխատանքներ	Մեկ միլիոն վեց հարյուր հիսունչորս հազար երկու հարյուր քսանհինգ 1,654,225	Երեք հարյուր երեսուն հազար ութ հարյուր քառասունհինգ 330,845	Մեկ միլիոն ինը հայուր ութանասունհինգ հազար յոթանասուն 1,985,070
1	ՀՀ Լոռու մարզի Արևածագ համայնքի 1-ին և 4-րդ փողոցների գիշերային լուսավորության կառուցման աշխատանքներ	Չորս միլիոն հինգ հարյուր իննսունյոթ հազար ինը հարյուր ութանասունինը 4,597,989	Ինը հարյուր տասնինը հազար հինգ հարյուր իննսունութ 919,598	Հինգ միլիոն հինգ հարյուր տասնյոթ հազար հինգ հարյուր ութանասունյոթ 5,517,587
1	ՀՀ Լոռու մարզի Այգեհատ համայնքի փողոցների գիշերային լուսավորության կառուցման աշխատանքներ	Մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունմեկ հազար յոթ հարյուր իննսունհինգ 1,571,795	Երեք հարյուր տասնչորս հազար երեք հարյուր հիսունինը 314,359	Մեկ միլիոն ութ հարյուր ութանասունվեց հազար հարյուր հիսունչորս 1,886,154

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.08.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրել է, որ «ԱՇՈՏ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես չի համապատասխանում հրավերով սահմանված մեկ չափաբաժնի անվանումը, մեկ ընդհանուր գնի փոխարեն ներկայացացված է չորս առանձին գներ և չորս անվանումներ՝ ըստ առանձին բնակավայրերում նախատեսվող աշխատանքների:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է, որ «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը ներկայացված է հրավերի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ բաժնով սահմանված կարգի խախտումով և ենթակա է մերժման ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի, այն է՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի 10.08.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, Օձունի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստաթղթերը և գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի դ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ***:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***հայտերի բացման և գնահատման նիստում՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում*** բացակայում է ***գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին***

<u>անհամապատասխան,</u> բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը...:

Այսպես, Օձունի համայնքապետարանի կարիքների համար Օձուն համայնքի բնակավայրերում լուսավորության համակարգերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԼՄՕՀ-ԳՀԱՇՁԲ-21/10» գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում Օձունի համայնքապետարանի կարիքների համար՝ Օձուն համայնքի բնակավայրում լուսավորության համակարգերի կառուցման աշխատանքների ձեռքբերումը, որոնք խմբավորված են մեկ չափաբաժնում:

Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ն:

«Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 2-ը՝ գնային առաջարկը ներկայացվել է հետևյալ տեսքով.

Չափաբաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի 1-ին /մասնակի/ և 22-րդ փողոցների գիշերային լուսավորության կառուցման աշխատանքներ	Երկու միլիոն յոթանասունմեկ հազար վեց հարյուր տասնմեկ 2,071,611	Չորս հարյուր տասնչորս հազար երեք հարյուր քսաներկու 414,322	Երկու միլիոն չորս հարյուր ութանասունհինգ հազար ինը հարյուր երեսունչորս 2,485,934
1	ՀՀ Լոռու մարզի Ծաթեր համայնքի 5-րդ,4-րդ և 12-րդ/մասնակի/ փողոցների գիշերային լուսավորության կառուցման աշխատանքներ	Մեկ միլիոն վեց հարյուր հիսունչորս հազար երկու հարյուր քսանհինգ 1,654,225	Երեք հարյուր երեսուն հազար ութ հարյուր քառասունհինգ 330,845	Մեկ միլիոն ինը հարյուր ութանասունհինգ հազար յոթանասուն 1,985,070
1	ՀՀ Լոռու մարզի Արևածագ համայնքի 1-ին և 4-րդ փողոցների գիշերային լուսավորության կառուցման աշխատանքներ	Չորս միլիոն հինգ հարյուր իննսունյոթ հազար ինը հարյուր ութանասունինը 4,597,989	Ինը հարյուր տասնինը հազար հինգ հարյուր իննսունութ 919,598	Հինգ միլիոն հինգ հարյուր տասնյոթ հազար հինգ հարյուր ութանասունյոթ 5,517,587
1	ՀՀ Լոռու մարզի Այգեհատ համայնքի փողոցների գիշերային լուսավորության կառուցման աշխատանքներ	Մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունմեկ հազար յոթ հարյուր իննսունհինգ 1,571,795	Երեք հարյուր տասնչորս հազար երեք հարյուր հիսունինը 314,359	Մեկ միլիոն ութ հարյուր ութանասունվեց հազար հարյուր հիսունչորս 1,886,154

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.08.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրել է, որ «ԱՇՈՏ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես չի համապատասխանում հրավերով սահմանված մեկ չափաբաժնի անվանումը, մեկ ընդհանուր գնի փոխարեն ներկայացացված է չորս առանձին գներ և չորս անվանումներ՝ ըստ առանձին բնակավայրերում նախատեսվող աշխատանքների:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է, որ «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը ներկայացված է հրավերի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ բաժնով սահմանված կարգի խախտումով և ենթակա է մերժման ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի, այն է՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Այսպիսով՝ «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 2-ի՝ գնային առաջարկի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ Ընկերությունը գնային առաջարկը ներկայացրել է նշելով թվով 4 աշխատանքի անվանում և համապատասխանաբար 4 ընդհանուր գին, մինչդեռ գնման առարկան համաձայն

հրավերի խմբավորված է մեկ չափաբաժնում, հետևաբար Ընկերությունը գնային առաջարկը ներկայացնելիս պետք է նշեր Ընթացակարգի հրավերի 1-ին չափաբաժնով նախատեսված գնման առարկայի՝ «Օձուն համայնքի բնակավայրերում լուսավորության համակարգերի կառուցում» անվանումը՝ մեկ ընդհանուր գնով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Ընկերության ներկայացրած գնային առաջարկը հրավերի պահանջներին անհամապատասխան կազմված լինելու պայմաններում գնահատող հանձնաժողովի կողմից «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը մերժելն իրավաչափ է և բխում է Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգավորումներից, ինչպես նաև հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքի համար Կարգի 41-րդ կետով նախատեսված չէ անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն:

Վերը շարադրված փաստական հանգամանքների ուժով՝ գտնում եմ, որ ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից 10.08.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**